ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2015, 68, № 3, 96-97

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ՍԻՐԱՆ ՏԻԳՐԱՆԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ
(ծննդյան 115-ամյակին)
(1900 - 2015)

Լրացավ Հայաստանի երկրաբանական ծառայության ավագ սերնդի նվիրյալներից մեկի, երկրաբանության բնագավառում գիտությունների թեկնածուի կոչման արժանացած առաջին հայ կին երկրաբան **Սիրան Տիգրանի Տիգրանյանի** ծննդյան 115 ամյակը:

Ս.Տիգրանյանը ծնվել է 1900թ. մայիսի 14-ին, Թիֆլիսում, զինծառայողի ընտանիքում: Գիմնազիան ավարտելուց հետո ընդունվում է Պետերբուրգի բարձրագույն դասընթացների ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի երկրաբանության բաժանմունքը, սակայն ցավոք ուսումը թողնում է անավարտ: 1919-1921թթ. աշխատում է Ալեքսանդրապոլում (Գյումրի), որպես ուսումնարանի դասատու:

1924 թ. Ս.Տիգրանյանը ավարտում է Մոսկվայի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը և վերադառնում Երևան, հրավիրվելով դասավանդելու ԵՊՀ:

Այդ տարիներին նա զուգահեռաբար զբաղվում է գիտահետազոտական աշխատանքներով՝ կապված "Շիրկանալի" շինարարության, 1926թ. Լենինականի երկրաշարժի պատճառների ուսումնասիրման, Երևանի ինժեներա-երկրաբանական քարտեզի կազմման և այլ աշխատանքների հետ, ինչպես նաև ակտիվորեն մասնակցում է Հայաստանի Պետական երկրաբանական կոմիտեի աշխատանքներին:

1935թ.-ից Ս.Տիգրանյանը աշխատանքի է անցնում Երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես գիտաշխատող:

1939-1946թթ. Երկրաբանական թանգարանի վարիչի պաշտոնում նրա բուռն գործունեությունն առնչվում էր թանգարանում պահվող նմուշների գիտական հիմունքներով դասակարգմանը և հանրությանը ներկայացմանը: Նա մեծ աշխատանք էր տարնում նաև դպրոցականների շրջանում՝ ծանոթացնելով նրանց Հայաստանի տարածքում հայտնի բազմազան լեռնային ապարների և հանքանմուշների հետ:

Ս.Տիգրանյանի գործունեության մի մեծ հատված նվիրված էր գիտության պատմության ուսումնասիրմանը: Նա ԽՍՀՄ ԳԱ գիտության

պատմության երկրաբանա-աշխարհագրական բաժանմունքի անդամ էր, Հայաստանի ԳԱ Նախագահությանը կից գիտության պատմության հանձնախմբի կազմակերպիչներից մեկը:

Ս.Տիգրանյանի ուսումնասիրությունները ներառում էին մամուլում հրատարակված նյութերի, լուսանկարների և արխիվներում պահվող զանազան փաստաթղթերի հավաքագրումը, որոնք առնչվում էին Հայաստանում իրականացվող երկրաբանական հետազոտությունների պատմության հարցերին: Նրա անմիջական երկարամյա ուսումնասիրությունների և ջանքերի շնորհիվ հանրությունն իրազեկ դարձավ հայ ականավոր երկրաբան-գիտնականներ Անդրեաս Արծրունու և Լեոնիդ Սպենդիարովի գործունեությանը:

Ս.Տիգրանյանի գրչին են պատկանում 60-ից ավելի հրատարակված և ձեռագիր աշխատություններ: Նա մասնակցել է առաջին հիդրոերկրաբանական համաժողովի (Մոսկվա, 1932թ.), 17-րդ Միջազգային երկրաբանական կոնգրեսի (Մոսկվա, 1937թ.) և գիտության պատմությանը նվիրված Միջազգային գիտաժողովի (Երևան, 1967թ.) աշխատանքներին:

Իր երկարամյա ազգանվեր գիտական և ակտիվ հասարակական գործունեության համար Ս.Տիգրանյանը արժանացել է կառավարական բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի (1951թ.):

Ս. Տիգրանյանի՝ առաջին հայ կին երկրաբանի, անխոնջ մշակի և հայրենասեր քաղաքացու անունը քաջ հայտնի էր հայ երկրաբանների ավագ և միջին սերնդի ներկայացուցիչների շրջանում: Այս հիշատակումը, կարևորելով Ս.Տիգրանյանի ներդրումը հայ երկրաբանական գիտության զարգացման գործում, նպատակ ունի նաև ծանոթացնել երիտասարդ սերնդին Հայաստանում երկրաբանական գիտության զարգացման ակունքներին մոտ կանգնած երախտավորներից մեկի կյանքին ու գործունեությանը:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն